

**ԹՈՒՉՔԱՅԻՆ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ՎԿԱՅԱԳՐՄԱՆ ՀԱՐՑԵՐՈՎ ՓՈՐՁԱԳԵՏԻ  
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ  
20.04.2023 – 20.07.2023**

**Ժամանակահատվածում կատարած աշխատանքների վերաբերյալ**

1. Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի և «AviationExam» կենտրոնի (հետայսու՝ Կենտրոն) միջև կնքվել է Քաղաքացիական ավիացիայի թռիչքային անձնակազմներին առցանց քննական ծառայությունների մատուցման պայմանագիր:

Ներկայումս բանակցություններ են տարվում Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի և Կենտրոնի միջև պայմանագրով հաստատված ծառայությունների ցանկի ընդլայնման վերաբերյալ:

2. Մշակել և Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի (հետայսու՝ Կոմիտե) նախագահի հաստատմանն են ներկայացրել 2022 թվականի ապրիլի 25-ի թիվ 187 Լ հրամանով հաստատված «Թռիչքային քննող տեսուչի ձեռնարկ»-ի 1-ին հրատարակության 2-րդ փոփոխությունը:

Փոփոխությունը պայմանավորված է «Տեսուչի ձեռնարկ»-ում օդաչու քննողների գործառույթների հետ կապված հարաբերությունների կարգավորման անհրաժեշտությամբ: Փոփոխության իրականացման հիմք են ընդունվել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության պետի 2022 թվականի փետրվարի 11-ի թիվ 3-Ն հրամանով հաստատված «AMC 1. FCL. 1015(d)(5): AMC 2. FCL.1015: AMC 1. FCL. 1020 և FCL 1000-FCL.1030» դրույթները:

3. Լրամշակել են «Վերգետնյա կարգավարի ձեռնարկ»-ի նախագիծը (հետայսու՝ Ձեռնարկի նախագիծ) և ներկայացրել Կոմիտեի թռիչքային գործունեության համապատասխան մասնագետների կարծիքին: Կարծիքների ամփոփումից հետո Ձեռնարկի նախագիծը կներկայացվի հաստատման:

Կոմիտեի ԹԱ վկայագրման հարցերով փորձագետ  
Աիդա Գաբրիելյան  
18.07.2023



Աիդա Գաբրիելյանի կողմից կատարած աշխատանքները գնահատում են 

ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ



ՄԻՀՐԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ